ինքն պատուով բնակեցոյց. ուստի յա-
ռաջ եկին ազգն Ռագրատունեաց։ Յետ
Հրաչէի առնուն զԹագն՝ Փառնաւազ.
Պաճոյճ. Կրունակ (Կոռնակ.) Փաւոս.
Հայկակ. Ներսանդ, և սորա որդին է
Տիգրան։

Տիգրան ինքն և ժամանակ իւր ցան-
կալի. 'ի բազում ազգաց խարաճ*) էառ.
զՅոյնս նուաճեաց. զաշխարհս ելից խա-
ղաղութեամբ. ինքն զեղեցիկ և արդար 'ի
դատաստանի, և ուտելն պարկեշտ, և
զհարկատուսն այսպէս մարդավարու-
թեամբ սովորեցոյց։ Յաւուրս սորա գե-
ղեցիկ քաղաքացւոց նման եղեն, և քա-
ղաքացիք այլ առաւել զեղեցկացան թէր-
պիյէթով**), ընչիւք և ապրանօք, ակա-
նակուռ և ոսկեղէն հագուստով։ Աժդա-
հակ թագաւորն Մարաց նախանձեալ

(*) Տուրք կամ հարկ արքունի։

(**) Քաղաքավարութիւն և կրթութիւն։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան